

## ՀԵՐԱԿԼ Բ ԹԱԳԱՒԻՈՒԻՆ ՄԷԿ ՀՐՈՎԱՐՏԱԿԸ

Այս օրերս մեր ձեռքն անցաւ ձեռաշիր մէկ օրինակն այս շահեկան նախակիս , որ արդէն Հրատարակուած էր «Արք» լրագրի 1899 ապրիլ 19 թուով . սակայն նկատելով որ յիշեալ թերթը մտաշելի չէ ոմանց , աւելորդ չենք համարիր «Բանասէր»ի մէջ ևս հրատարակելը :

Ողորմութեամբն Աստուծոյ մեք Յեսսեան Դաւթեան Սողոմոնեան Բագրատունեան , Օծեալ Թամրազի Որդի Արքաց Վրաց եւ Արքայ Կախից , բնական իշխող Սա Եցիսէ Սաաթարէզու , իշխան Ղազախու , իշխան Բօրչալիու , իշխան Շամշադիխու , իշխան Կակու , իշխան Շաքու , իշխան Շրվանու , Տիրող եւ հրամայող Գանջայու եւ Երեւանու Երկրորդ ՀերԱԿԸ : Յայանի լիցի՝ այս ամենեցուն , ի Սպահանու Զուղայեցի Սուլթանի Որդի ՇԱՀՄԻՔՆ՝ «որովհետեւ զհնագոյն սէրն եւ զհաւատարմութիւն իւր եւ հարցն իւրօց՝ որ առ նախնիսն մեր եւ առ մեզ . ունէրն ի գոլն իւրեանց ի յասիայս , ի ժամանակս յառաջին թագաւորացն Պարսից եւ Նադրշահին , Սա այժմ վերստին նորոգելով ի հեռաբնակ աշխարհէն հնդկաց , բազմստեսակ հաւատարմութիւն եւ շահաւոր ազգեցութիւնք եցոյց մարոյս Արքայութեան . նմին իրի վերաթուեցաւ մնօք Վրաց իշխան , զի ընդ յամենայն տեղիս ինքն եւ Օրինաւոր Որդիքն իւր՝ շահեսցին նոյն շահեցողութեամբն , եւ պատուեցին նոյն պատուով որպէս Վրաց բնիկ իշխանքն . եւ ետուք սմա զերբս այս երկայնակ բոլոր վահան Ուկեգետին , եւ ի միջին նորին քանդակեալ նաւա՝ ինչան շահաւորութեան յարատեւութեան ի բարիս , եւ ի մէջ նաւին եղեալ վէմմի ինչան կարծրագոյն հաստատութեան , եւ ի վերայ վիմին յեցեալ բազուկ մի ինչան կարողութեան . եւ ի ձեռին իւրում ունելով դէտակն ինչան ուշիմարար հեռատեսութեան , եւ յետկոյս վիմին բուսեալ ծառ մի ինճուրնուոյ պտղալից եւ սաղարթալից , բարձրացեալ քան զդլուխ վիմին՝ ի նշան պատուոյ եւ արդիւնաւոր գործունէութեան , այսու ամենայնիւ պսակաւորեալ իշխան սկան պսակաւ , յորս ձեռագ բեցաք յատուկ ձեռամբ մերով , եւ կնքեցաք ԱՐՔԱՅԱԿԱՆ կնքով մերով : Դրեցաւ ի ՅԱՐՔԱՅԱԿԱՆ Պալատան մերում , որ ի Մայրաքաղաք թիվլիդ . ձեռամբ Ատենաւ դրպրին մերոյ Դիւան թումաննան գուջապու իշխան Սուլխանին . Յամի կենարարին մերոյ 1786ին , եւ ի քառասներորդ ամի ԱՐՔԱՅՈՒԹԵԱՆ մերոյ . ի Մարտի ամսոյ 22ին , եւ ի Վրաց Քննիկին 474ին :

ՀԵՐԱԿԸ

(ԿԵՐ)

(ԿԵՐ)

Հրամանաւ ՔՐԻՍՏՈՍԱզօր ԱՐՔԱՅԻՆ , ընդ Վրացերէն գրեալ նախատպին համաձայն թարգմանեցի նորին Արքայական բարձրութեան Հայերէն գրագիր եւ թարգման .

ՏԵՐ Դաւթիթ ՏԵՐ Յօհանեան  
(ԿԵՐ)